ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/3ՏՀ

ք. Երևան «26» «03» 2020 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԽԱՉՄԻՇՇԻՆ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Համզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության և ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհանայնքային երկու փողոցների 2,1կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 3 տարի:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5,808,000 (հինգ միլիոն ութ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

Չափաբաժին 7՝ **ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն** ծառայության գինը կազմում է 2,052,000 (երկու միլիոն հիսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին 8՝ **ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհանայնքային երկու փողոցների 2,1կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության** ծառայության գինը կազմում է 3,756,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով

(հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե՝

- պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները.

- պայմանագրի կատարման համար հատկացվում են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը՝ կապալի օբյեկտի համար հատկացված ֆինանսական միջոցների տաս տոկոսի չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ Տավուշի մարզ ք.Իջևան, Նալբանդյան 2
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Տավուշ մ/ճ
Հ/Հ 900011002632	Հ/Հ 220103330340000
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 07613551
գլխավոր քարտուղարին փոխարինող	տնօրեն
Հ. Բատիկյանի	Մ. Համզյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«26» «03» 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/3ՏՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
7	71351540/532	ստորև	դրամ	2,052,000	1	ստորև	ստորև
8	71351540/533	ստորև	դրամ	3,756,000	1	ստորև	ստորև

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 7

ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	
Ծրագրի անվանումը	ՀՀ 2020թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2020թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի ավտոճանապարհ
Հատված	Կմ0+000-կմ2+000
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին: • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը: • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի: • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար: • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով: • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը): • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության ծառայության համար նշանակված տվյալ շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչի տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար): • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո 2 (երկու) օրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-

	ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: Ընթացիկ հաշվետվությունները ընդգրկելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. Որոշման:

Ծառայությունների մատուցման ժամկետը

սկիզբը	***ավարտը***
ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելց հետո, համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 8

ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհամայնքային երկու փողոցների 2,1կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

Ծրագրի անվանումը	ՀՀ 2020թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2020թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհանայնքային երկու փողոցների 2,1կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհանայնքային երկու փողոցներ
Հատված	ներհանայնքային երկու փողոցների 2,1կմ երկարությամբ հատվածներ
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին: • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը: • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի: • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար: • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով: • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը): • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության ծառայության համար նշանակված տվյալ շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչի տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար): • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից

	ստորագրելուց հետո 2 (երկու) օրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: Ընթացիկ հաշվետվությունները ընդգրկելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. Որոշման:

Ծառայությունների մատուցման ժամկետը	
սկիզբը	***ավարտը***
ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելց հետո, համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 7
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Ընդհանուր արժեքը (տոկոս)
1	2	3	4	5
	1.Հողային աշխատանքներ			
1	Գոյություն ունեցող III8գ գրունտային պատվածքի քանդում բուլդուզերով տեղափոխելով մինչև 50մ կուտակում	$մ^3$	3107	
2	Կուտակված բնահողի տեղափոխում բուլդուզերով մինչև 50մ լիցք	$մ^3$	185	
3	Ավելորդ բնահողի բարձում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	2922	
4	Շին աղբի տեղափոխում 5-կմ	տն	5697.9	

5	Բնահողի խտացում գլդոնով 25տ քաշով 6 անցումով1 հետքի վրայով յուրաքանչյուր 30սմ -ը մեկ	մ³	2819.32	
6	Բնահողի ջրում	մ³	2819.32	
7	Ե/բ հավաքովի վաքերի համար խրամուղու փորում 0,5խոր.մ շերեպի տարողությամբ բառնալով ա/ինքնաթափերի վրա	մ³	575.9	
8	Շին աղբի տեղափոխում 5-կմ	տն	1123	
9	Ե/բ ջրահեռացման առուների գրունտային հիմքի խտացում	մ³	872.5	
			Ընդամենը 1.	**8.538**
	2.Ճանապարհային պատվածք			
1	Հավասարեցնող կոպճավազային շերտ h=10 սմ	մ2	8781	
2	Խճային հիմք h=12սմ	մ2	8725	
3	Բիտումի տարածում 4,12տ/1000մ2	տ	35.947	
4	Միաշերտ մանրահատիկ ա/բետոն h=5սմ	մ2	8464	
			Ընդամենը 2.	**61.384**
	3.Կողնակներ			
1	Կողնակների ամրացում կոպճավազով 10սմ հաստ	մ2	1622	
			Ընդամենը 3.	**0.795**
	4.Ջրահեռացման 30*34 հավաքովի վաքեր (1745,1 գծ.մ կամ 581.70 հատ /1 հատի երկարությունը-3,0մ/ և փակ հատված 77.15մ կամ 25.71 հատ /1 հատի երկարությունը-3,0մ/)			
1	Հավաքովի ե/բետոնե վաքերի տեղադրում (30*34սմ)-581.7 հատ Լ-3մ	մ3	139.61	
2	Հավասարեցնող կոպճավազային շերտ h=10 սմ	մ3	130.88	
3	Հավաքովի բետոնե վաքերի արժեքը (30*34սմ)- Լ-3մ	հատ	581.7	
4	Մետաղական ցանցերի տեղադրում /անկյունակների 50*50*5մմ ,8A500C և 22A500C ամրաններից	տ	1.822	
5	Մետաղական ցանցերի արժեքը	տ	1.822	
6	Վաքերի ջրամեկուսացում բիտումի կրկնակի քսուկով	մ2	2198.83	
7	Հավաքովի ե/բետոնե վաքերի տեղադրում (30*34սմ)-77.15գծ.մ, 25.71 հատ Լ-3մ	մ3	6.1704	
8	Հավասարեցնող կոպճավազային շերտ h=10 սմ	մ3	5.01475	
9	Հավաքովի բետոնե վաքերի արժեքը(30*34սմ)- Լ-3մ	հատ	25.71	
10	Վաքերի ջրամեկուսացում բիտումի կրկնակի քսուկով	մ2	97.209	
			Ընդամենը 5.	**27.516**
	5.Գծանշում			
1	Երթևեկելի մասի գծանշում հոծ գծով 0.1մ լայն.- 1.1	կմ	0.02	
2	Երթևեկելի մասի գծանշում հոծ գծով 0.1մ լայն.- 1.2.1	կմ	3.52	
3	Երթևեկելի մասի գծանշում ընդհատված գծով (1:3) 0.10-1.5	կմ	0.205	
4	Երթևեկելի մասի գծանշում ընդհատված գծով (0,5:0,5) 0.10-1.7	կմ	0.01	
			Ընդամենը 6.	**0.130**
	6.Նշաններ			
1	Նոր նշանների տեղադրում, մետաղական կանգնակներով	հատ	45	
2	Նախազգուշացնող	հատ	2	
3	Առավելության	հատ	25	

4	Արգելող	հատ	18	
			Ընդամենը 7.	**1.636**
			Ընդհանուրը (տոկոս)	**100**
			Ընդհանուրը* (հազ. դրամ)	**137 084.270**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՀԱՎԱԼԱԹԵՐԹ 8
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհամայնքային երկու փողոցների 2,1կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Ընդհանուր արժեքը (տոկոս)
1	2	3	4	5
	1-ին փողոց			
I	**Նախապատրաստական աշխատանքներ**			
1	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	1,81	
2	Երթևեկելի մասի դիտահորի սալերի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	3	
			1.Ընդամենը	**0,265**
II	**Հողային աշխատանքներ**			
1	IV10ե գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ³	130	
2	IV10ե գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	2470	
3	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ³	130	
4	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	380	
			2.Ընդամենը	**2,667**
III	**ճանապարհային պատվածք**			
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	15109	
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	12772	
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	12498	
			3.Ընդամենը	**49,701**
IV	**Մայթեր**			
1	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	199,8	
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	270	
3	Մանրահատիկա/բետոն h=3սմ	մ²	270	
4	Միաձույլ բետոնե եզրաշար 0.1x0.2մ B-15	մ³	3,02	
5	Թեքուղիներ			
.	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	17,4	

.	Խորացված դիրքով տեղադրվող բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	9,5	
			4.Ընդամենը	2,021
V	**Կողնակներ**			
1	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից՝ 5.0կմ-ից կողնակների իրականացման համար	մ³	397	
2	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=17սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ²	2337	
			5.Ընդամենը	0,420
VI	**Ուղիներ**			
1	Ավազակոպճային շերտ մետաղական խողովակների տակ h=10սմ	մ³	5,0	
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	69	
3	Խողովակների և վաքերի միացման մասում միաձույլ բետոն B15	մ³	0,1	
4	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	70,40	
5	Գլխադիրների միաձույլ բետոն B15	մ³	3,6	
6	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	2329	
7	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	2258	
8	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	2221	
			6.Ընդամենը	9,644
VII	**Մուտքեր**			
1	Ավազակոպճային շերտ մետաղական խողովակների տակ h=10սմ	մ³	2,80	
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	37	
3	Խողովակների և վաքերի միացման մասում միաձույլ բետոն B15	մ³	0,2	
4	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	37,80	
5	Գլխադիրների միաձույլ բետոն B15	մ³	1,8	
6	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	564	
7	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	564	
8	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	564	
			7.Ընդամենը	2,488
VIII	**Բետոնե վաքեր**			
1	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	6,30	
2	Ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ; 34x30սմ չափսի	հատ	42	
3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	158,8	
			8.Ընդամենը	0,996
IX	**Հենապատեր**			
1	IV10ե գրունտի մշակում, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	45	
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	10	

3	Ավազակոպճային շերտ նոր h=20սմ	մ³	10,26	
4	Հիմքի խամքարե բետոն B20	մ³	18,24	
5	Իրանի խամքարե բետոն B20	մ³	17,1	
6	Հենապատի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	100	
7	Հետադարձ լիցք	մ³	10	
			9.Ընդամենը	**0,926**
X.	**Ջրթող խողովակների մաքրում, վերականգնում**			
1	Գոյություն ունեցող խողովակի մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	12	
2	d=1.0մ ե/բ խողովակի գլխադիրների նորոգում միաձույլ բետոնով B15	մ³	1,43	
3	d=1.0մ ե/բ խողովակի գլխադիրի թևերի միաձույլ բետոն B12.5	մ³	1,16	
4	d=1.0մ ե/բ խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B12.5	մ³	2,52	
			10.Ընդամենը	**0,213**
XI.	**Մետաղական խողովակ d=426մմ, ՊԿ11+34-ում**			
1	IV10ե գրունտի մշակում, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	11	
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	17	
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0,84	
4	Մետաղական խողովակների տեղադրում d=426.մմ; 1գծ.մ=72.3կգ; δ=7մմ	գծ.մ	9,3	
5	Ջրհորի միաձույլ բետոն B15	մ³	1,4	
6	Ջրհորների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	8,14	
7	Ջրհորի մետաղական շրջանակ L40x40x4մմ; 1գծ.մ-2.42կգ	գծ.մ	4,8	
8	Ջրհորի մետաղական ճաղաշար AIIIØ12մմ; 1 գծ.մ=0.888կգ	տոն	0,01254	
9	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	12,44	
10	Հետադարձ լիցք	մ³	17	
			11.Ընդամենը	**0,286**
XII.	**Անձրևընդունիչներ**			
Ա.	**Ծ.Վ. դպրոցի մուտքի մոտ**			
1	IV10ե գրունտի մշակում, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	3,0	
2	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	0,90	
3	Ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ; 34x30սմ չափսի	հատ	6	
4	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	22,68	
5	Մետաղական շվելեր N8; 1գծ.մ-7.05կգ	գծ.մ	18	
6	Մետաղական շվելեր N6.5; 1գծ.մ-5.9կգ, L=36սմ	գծ.մ	90	
Բ.	**ՊԿ11+28 մուտքի մոտ**			
1	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	0,30	
2	Ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ; 34x30սմ չափսի	հատ	2	

3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	7,56	
4	Մետաղական շվելեր N8; 1գծ.մ-7.05կգ	գծ.մ	12	
5	Մետաղական շվելեր N6.5; 1գծ.մ-5.9կգ, L=36սմ	գծ.մ	60	
			12.Ընդամենը	**0,404**
XIII.	**Ճանապարհի կահավորում**			
Ա.	**Ճանապարհային նշաններ**			
	Նախազգուշացնող	հատ	1	
	Առավելության	հատ	22	
	Հատուկ թելադրանքի	հատ	12	
	Տեղեկատվության	հատ	1	
	Արհեստական խոչընդոտ h=6սմ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ	տոն	5,06	
Բ	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**			
	1,1	կմ	0,078	
	1,5	կմ	1,5852	
	1,25	մ²	9,6	
	1.14.1	մ²	40	
			13.Ընդամենը	**0,850**
			Ընդհանուրը՝ 1-ին փողոց (տոկոս)	**70,881**
	2-րդ փողոց			
I	**Նախապատրաստական աշխատանքներ**			
1	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	0,3	
2	Երթևեկելի մասի դիտահորի սալերի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	1	
			1.Ընդամենը	**0,078**
II	**ճանապարհային պատվածք**			
4	Փոսային նորգում h=3-5սմ	մ²	472	
5	Փոսային նորգում h=5-12սմ	մ²	748	
6	Փոսային նորոգում հիմքով			
.	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	762	
.	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	762	
7	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ	տոն	232,6	
8	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	4713	
			2.Ընդամենը	**22,916**
III	**Մայթեր**			
1	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	20	
2	Գոյություն ունեցող մայթերի ա/բ ծածկի քանդում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	12	
3	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	284,1	
4	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	371	
5	Մանրահատիկա/բետոն h=3սմ	մ²	371	
6	Միաձույլ բետոնե եզրաշար 0.1x0.2մ B-15	մ³	5,08	
7	Թեքուղիներ			

.	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	55,2	
.	Խորացված դիրքով տեղադրվող բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	31,5	
			3. Ընդամենը	**3,181**
IV	**Ուղիներ**			
1	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	423	
2	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	410	
			4. Ընդամենը	**1,494**
V	**Մուտքեր**			
1	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	302	
2	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	302	
			5. Ընդամենը	**0,957**
VI.	**Ճանապարհի կահավորում**			
Ա.	**Ճանապարհային նշաններ**			
	Առավելության	հատ	7	
	Հատուկ թելադրանքի	հատ	14	
	Տեղեկատվության	հատ	1	
	Արհեստական խոչընդոտ h=6սմ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ	տոն	2,95	
Բ	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**			
	1,5	կմ	0,707	
	1,25	մ²	5,6	
	1.14.1	մ²	5,6	
	1,17	մ²	2,4	
			6.Ընդամենը	**0,493**
			Ընդհանուրը՝ 2-րդ փողոց (տոկոս)	**29,119**
			ԱՄԲՈՂՋԸ՝ երկու փողոցները միասին (տոկոս)	**100**
			ԱՄԲՈՂՋԸ՝ երկու փողոցները միասին * (հազ. դրամ)	**250 752,084**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ ք.Իջևան, Նալբանդյան 2
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Տավուշ մ/ճ
Հ/Հ 220103330340000
ՀՎՀՀ 07613551
տնօրեն
Մ. Համզյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«26» «03» 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀՇՁԲ-2020/3ՏՀ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
7	71351540/532	տեխնիկական հսկողության ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
8	71351540/533	տեխնիկական հսկողության ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ ք.Իջևան, Նալբանդյան 2
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Տավուշ մ/ճ
Հ/Հ 220103330340000
ՀՎՀՀ 07613551
տնօրեն
Մ. Համզյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
«26» «03» 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/3ՏՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«26» «03» 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/3ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն